ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **29 հուլիսի 2021թ.**

2021թ-ի հուլիսի 21-29-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ դիզելային վառելիքի ձեռքբերման ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝ Հիմնադրամի գլխավոր ճարտարագետի տեղակալ,

Ե. Էլբակյան՝ Հիմնադրամի շենք շինությունների գազ. ջր. ծառայության պետ,

Ֆ. Բարսեղյան՝ Հիմնադրամի տեխ. բյուրոյի ղեկավար,

Ս. Բեյբության՝ Հիմնադրամի պահեստապետ,

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, սակայն Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով չորս անդամներ՝ բացակայում էր հանձնաժողովի անդամ Ք. Վարդանյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ծածկագրով գնան ընթացակարգին մասնակցելու համար ներկայացված հայտերի, հայտերի բացման և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1.ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Դիզելային վառելիք ձմեռային (բաքով)	2880000
2	Դիզելային վառելիք ամառային (կտրոնով)	600000

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումը նախատեսվել էր www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2021 թվականի հուլիսի 28-ին, ժամը «14:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ներկայացված տեղեկությունն ընդունել ի գիտություն.
2. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ոչ մի հայտ չի ներկայացվել և հաստատել «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/24 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ե. Էլբակյան _____

Ֆ. Բարսեղյան _____

Ս. Բեյբության _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ք. Ազիբեկյան _____